ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ЗАО

«ЕРЕВАНТРАНС»

ՀՀ, 0031, ք.Երևան, Լենինգրադյան 16

☎ (011)390244

«22» 08 2022թ.

№ Ք-1197

«ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Ձ-Ի ՏՆՕՐԵՆ՝
տիկին Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
*(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մինաս Ավետիսյան 4-րդ փող., 22 շենք, 35 բն.)*

Հարգելի տիկին Մանուկյան

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի և «ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Ձ-ի միջև 2022թ-ի մարտի 17-ին կնքված N ԵՏ-ԳՀԱՊՁԲ-02/22-6-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Ձ-ն պարտավորվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում մատակարարել «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ ավտոմեքենաների պահեստամասերը:

Պայմանագրի շրջանակներում ս.թ. հուլիսի 29-ին նախատեսվել են ֆինանսական միջոցներ և ծանուցմամբ՝ Ձեզ ուղարկվել է համաձայնագրի նախագիծը և համաձայնագիր կնքելու առաջարկը, առաջարկելով Ձեզ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 18-րդ կետով սահմանված պահանջները, ինչպես նաև՝ Պայմանագրի 8.15 կետը, 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն և ներկայացնել պատվիրատուին:

Սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրվա դրությամբ՝ ս.թ. օգոստոսի 22-ին, «ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից չի ստորագրվել և Պատվիրատուին չի ներկայացվել նշված համաձայնագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետով սահմանված պահանջները՝ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն 2022 թվականի օգոստոսի 22-ին

միակողմանիորեն ամբողջությամբ լուծել է N ԵՏ-ԳՀԱՊՁԲ-02/22-6-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք մինչև ս.թ. օգոստոսի 30-ը ներառյալ ապահովել պայմանագրի կատարման ապահովումը՝ 8700 (ութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովումը՝ 13050 (տասներեք հազար հիսուն) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումները չապահովելու դեպքում «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրի լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

**ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ՄԱՐՏԻՆ ՔԱԼԱՇՅԱՆ**

*Կատարող՝*
*Վ. Էլոյան*
*+374 95 333 757*